

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի
հունիսի 19-ին ZOOM առցանց հարթակում կայացած Գիտական խորհրդի N10 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Օրակարգ

1. 2019/2020 ուստարվա մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների (առկա և հեռակա) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունը /զեկ. հանձ. նախ. Մ.Ապրեսյան, Ս.Մարգարյան, Գ.Կարապետյան, Պ.Էֆենդյան/
2. Կուրատորների հաշվետվությունը կատարած աշխատանքի վերաբերյալ /զեկ.Ս.Հ.Հովհաննիսյան, Տ.Սաֆարյան, Տ.Մկրտչյան, Վ.Անդրեասյան/
3. Սերվիսի և Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ
4. Ընթացիկ հարցեր

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. **ԼՍԵՅԻՆ.** Գ.Կարապետյանի, Մ.Ապրեսյանի, Ս.Մարգարյանի և Պ.Էֆենդյանի հաշվետվությունը 2019/2020 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ: Բոլոր նախագահներն իրենց հաշվետվություններում ներկայացրեցին 2019-2020 ուստարվա շրջանավարտների ցուցաբերած բարձր ցուցանիշները: Արձանագրվեց բարձր առաջադիմություն թե՛ աշխատանքի ծավալով, թե՛ ներկայացման բնույթով և թե՛ պատրաստվածության մակարդակով: Ինչի արդյունքում անբավարար գնահատական չի արձանագրվել: Բարձրաձայնվեց նաև հեռակա ուսուցման ուսանողների բարձր պատրաստվածությունը: Գ.Կարապետյանը նշեց, նաև, որ բարձր առաջադիմության հետ մեկտեղ առկա էին նաև ոչ ճիշտ ձևակերպված

աշխատանքներ, ինչին պետք է ղեկավարների ուշադրությունը հրավիրել, ինչպես նաև գրանցվել են ավարտական աշխատանքների վերնագրերի ոչ հստակ ձևակերպումներ: Նախագահները շնորհակալություն հայտնեցին ֆակուլտետի ղեկանին, ամբիոնի վարիչներին ատեստավորման քննությունները պատշաճ մակարդակի կազմակերպելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ. Մ.Ա.Գրիգորյանը խոսեց ուսանողների գնահատման ժամանակ հանձնաժողովի միակարծիք լինելը, նշեց նաև, որ ուսանողների կողմից բողոքարկման կամ դժգոհության դեպք չի եղել, ինչը միանշանակ խոսում է ատեստավորման քննության անցկացման թափանցիկ լինելու մասին: Աշխատանքների ներկայացման ժամանակ նկատվում էր ինքնուրույնության տարրը: Ամբիոնների կողմից կատարված աշխատանքը մեծ էր: Մենք պետք է ձգտենք զերծ մնանք տեխնիկական սխալներից: Շնորհակալություն հայտնեց ամբիոնի վարիչներին, աշխատակիցներին կատարած աշխատանքի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. **ԼՄԵՑԻՆ.** Ա.Հովհաննիսյանի, Տ.Մկրտչյանի, Տ.Սաֆարյանի, Վ.Անդրեասյանի հաշվետվությունը 2019-2020 ուս.տարվա ընթացքում կատարած կուրատորական աշխատանքների վերաբերյալ: Հաղորդման ընթացքում կուրատորները մանրամասնորեն ներկայացրեցին կուրսերում տիրող բարոյահոգեբանական վիճակը, ինչպես նաև կրթական մակարդակը, առաջադիմությունը և սոցիալական ըդհանուր պատկերը կուրսերում: Բոլոր զեկուցողները կարևորեցին կուրատորի դերն ու նշանակությունը:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. դոց.Մ.Գրիգորյանին հետաքրքրեց ուսանողների կողմից կուրատորին ուղղված հարցերի բնույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կուրատորների աշխատանքը գնահատել բավարար:

3

3.1 **ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը «Մերվիս» ամբիոնի աշխ.գ.թ., դոց.Սեյրան Սուվարյանի ամբիոնի վարիչի թափուր

պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Ս.Սուվարյանի գիտամանկավարժական և ամբիոնում ծավալած գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնելուն:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դոց.դոց.Ս.Գրիգորյանը, Ա.Գրիգորյանը, Պ.Դավթյանը, Վ.Գրիգորյանը, Գ.Ալեքսանյանը, Ա.Ավագյանը, Տ.Մկրտչյանը և պրոֆ. Վ.Վարդանյանը: Իրենց խոսքում բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնավարման ընթացքում Ս.Սուվարյանը վայելել է բարձր հեղինակություն թե՛ ամբիոնում և թե՛ ֆակուլտետում: Ս.Սուվարյանի պաշտոնավարման ընթացքում Սերվիսի ամբիոնը ձեռք է բերել լուրջ հաջողություններ ինչպես կրթական, այնպես էլ գիտական ոլորտում: Պաշտոնավարման ամբողջ ընթացքում Ս.Սուվարյանը ցուցաբերել է աշխատասիրության և բանիմացության բարձր մակարդակ, սրտացավ մոտեցում մասնագիտական որակ ապահովելու հարցում: Ելույթներում կոչ արվեց ձայն տալ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում Ս.Սուվարյանի ընտրությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Սարգիս Սամվելի Քելյան, անդամներ՝ դոց.դոց.Պետրոս Գարուշի Դավթյան, Եսթեր Սոսի Մանուկյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Սարգիս Սամվելի Քելյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից ներկա էին 28 անդամ, քվեարկության մասնակցել են 28-ը:

«Սերվիս» ամբիոնի վարիչի պաշտոնում Սեյրան Սուվարյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 27-ը, դեմ՝ 1, անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) կրկնակի քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանին «Մերվիս» ամբիոնի վարիչի պաշտոնում:

Որոշումն ընդունվեց միաձայն:

3.2 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը «Երկրաֆիզիկայի» ամբիոնի երկրաբ.գ.թ., դոց. Մարինե Մկրտչյանի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Մ.Մկրտչյանի գիտամանկավարժական և ամբիոնում ծավալված գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դոց.դոց.Մ.Գրիգորյանը, Ա.Գրիգորյանը, Պ.Դավթյանը, Վ.Գրիգորյանը, Ա.Ավագյանը, Տ.Մկրտչյանը և պրոֆ. Վ.Վարդանյանը: Իրենց խոսքում բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնավարման ընթացքում Մ.Մկրտչյանը ցուցաբերել է աշխատասիրություն և բանիմացություն: Ելույթներում կոչ արվեց ձայն տալ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում Մ.Մկրտչյանի ընտրությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Սարգիս Սամվելի Քեյյան, անդամներ՝ դոց.դոց.Պետրոս Գարուշի Դավթյան, Եսթեր Սոսի Մանուկյան:

ԼՄԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց. Ս.Քեյյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից ներկա էին 28 անդամ, քվեարկության մասնակցել են 28-ը:

«Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչի պաշտոնում Մարինե Մկրտչյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 25-ը, դեմ՝ 3, անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) կրկնակի քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել դոց.Սարինե Սարգսի Մկրտչյանին «Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչի պաշտոնում:
Որոշումն ընդունվեց միաձայն:

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. ՀԱԱՀ Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի Գիտական Կենտրոն մասնաճյուղի ավագ գիտաշխատող Սամվել Զալիբեկի Կրոյանի դիմումն իր դոկտորական ատենախոսության թեման «ՀՀ հողերի գենետիկական և ագրոարտադրական հատկությունները կլիմայի փոփոխության և անապատացման պայմաններում» վերնագրով հաստատելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՀԱԱՀ Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի Գիտական Կենտրոն մասնաճյուղի ավագ գիտաշխատող Սամվել Զալիբեկի Կրոյանի դոկտորական ատենախոսության «ՀՀ հողերի գենետիկական և ագրոարտադրական հատկությունները կլիմայի փոփոխության և անապատացման պայմաններում» վերնագրով թեման հաստատել:

4.2 ԼՍԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը ուսումնական պրակտիկաների առցանց կազմակերպման և անցկացման ծրագրերն ամբիոնի վարիչների կողմից դեկանատ ներկայացնելու վերաբերյալ: Նշվեց, որ ամբիոնի վարիչների կողմից պրակտիկաների առցանց կազմակերպման և անցկացման ծրագրերը պահանջվող ժամկետներում ներկայացվել են դեկանատ և վերջիններս հասանելի են ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան